ՀԵ Ծար. 3, Էլմ. շար. 7
Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ,
Որ Էնն Աստուած աստ բազմեցաւ.
Խաղաղութեան ձայն հնչեցաւ,
Սուրբ ողջոյնի հրաման տըւաւ,
Եկեղեցիս մի անձն եղև,
Համբոյրս յօդ լըրման տըւաւ:
Թշնամութիւնն հեռացաւ,
Սէրն յընդհանուրս սփռեցաւ.
Արդ պաշտօնեայք, բարձեալ զձայն,
Տուք օրհնութիւն ի մի բերան
Միասնական աստուածութեանն,
Որում սրովբէքն են սրբաբան:

(Քրիստոսը մեր մեջ հայտնվեց,
Որ Էնն Աստվածն այստեղ բազմեց.
Խաղաղության ձայնը հնչեց,
Սուրբ ողջույնի հրաման տվեց.
Եկեղեցին մեկ անձ դարձավ,
Համբույրով օդը հագեցավ:
Թշնամությունը հեռացավ,
Սերն ամենքի մեջ սփռվեց:
Հիմա, ծառայողնե՛ր, ձա՛յն վերցրեք,
Միաբերան օրհնեցե՛ք
Միասնական Աստվածությանը,
Որ անում են նաև սրբաբան հրեշտակները):

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025